ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՂԵԿԱՎԱՐ
ՀՐԱՄԱՆ

«___»_____ 2022թ. No _____

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 7-Ի N 540-Ա ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասով և ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 755-Լ որոշմամբ հաստատված ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կանոնադրության 19-րդ կետի 7-րդ ենթակետով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնում տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու նշանակել իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժնի պետ Մարիամ Մովսեսյանին:

(կետը փոփ 12.09.2024թ. N 1061–Ա)

2. Սահմանել, որ ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների գործընթացը՝ մամուլի հետ տարվող աշխատանքները, զանգվածային լրատվությունների միջոցների հետ համապատասխանաբար, հանդիպումների կազմակերպումը, մամուլի ասուլիսների, հարցազրույցների, հայտարարությունների, պարզաբանումների և աշխատանքային հանդիպումների կազմակերպման և նշված

հետ կապված այլ գործողությունները համաձայնեցվում են իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժնի պետ Մարիամ Մովսեսյանի հետ:

(կետը փոփ 12.09.2024թ. N 1061-Ա)

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

Ս. ՍԱՐԳՍՅԱՆ

« » նոյեմբերի 2022թ.
ք. Երևան